

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմը 10 րուր, կէս տարեկանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի համադրական մէջ:
Ստորագրողացիք դիմում են ուղղակի
Տիֆլիս. Քեդակսի «Միսակ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Հայտարարումին ընդունվում է ամեն լիցուով:
Հայտարարութիւնների համար զմարում են
կարգանշիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՒՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ խմբագրին
Ներքին լուրեր—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ «Ճէ-
րդէի Հատկի» լրագրի յօդուած: «Порядок»
լրագրի թղթակցութիւն: Նամակ թիւրքիայից—
Արտաքին լուրեր—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Գաւթի բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մօտիվա, յունիսի 8

Խնդրեմ երկտողիս տեղ չնորհել «Մշակում»:
Նամակովս ես չեմ պաշտպանում ոչ ոքի, այլ,
ինչպէս ընթերցող հասարակութեան մի անդամ,
արտայայտում եմ այն տպաւորութիւնը, որ թո-
ղեց ինձ վրա մի չափազանց տխուր երեւոյթ:
Ում որ թիւնդէ աշխարհաբառ լեզուի զարգա-
ցումը, նրան չեն կարող չը վիրաւորել «Փարո-
սի» վերջին տետրի վերջին տողերը: Համարձակ-
վում եմ կարծել, որ ամեն մէկը կը համաձայնի
այն մտքի հետ, թէ աշխարհաբառի կանոնաւոր
զարգացման նպատակով միջոցներից մէկը պէտք է
լինի պարբերական մամուլը: Այստեղ ստեղծ-
վում են նոր բառեր, նոր դարձուածներ, այս-
տեղ բնականապէս որոշվում է այն կամ այն քե-
րականական ձևի գերազանցութիւնը ուրիշի ա-
ռաջ, այստեղ պարզվում են միայն գործնակա-
նապէս առանց թէօրիքական դատողութիւնների
բազմաթիւ վիճելի հարցեր լեզուի վերաբերու-
թեամբ: Պարզ է, որ մեր պարբերական հրատա-
րակութիւնների դերը աշխարհաբառի զարգաց-
ման խնդրի մէջ շատ նշանաւոր և ծանր է:
«Հիւսիսամիայն», «Մշակ», «Մեղու», «Փորձ» և
«Մանկավ. թերթ»—դրանք բոլորն էլ իրանց ու-
ժերին համեմատ նպաստել և նպաստում են նո-
րածին գրականական լեզուի կազմակերպու-
թեանը: Իսկ «Փարոսը» մասնակցում է արդեօք

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, չարաթ օր, յունիսի 20-ին վրաց
թատրոնական խումբը տալու է Արծրունու
թատրոնում էմիլ-զը-ժիրարդէնի «Մի կնոջ տան-
ջանք» պիէսան: Ներկայացումը լինելու է յո-
գուտ խմբի կառավարիչ պ. Չուրիւովի:

Իգիթիթի մեզ գրում են հետեւալը: «Իգիթի-
թից 3 վերստ հեռու խալֆալու գիւղում մի ե-
րիտասարդ փորձում է բռնաբարել իր քրոջ աղ-
ջրկան, տանելով նրան դաշտը: Աղջիկը ընդդի-
մանում է նրան, այն ժամանակ սա կապում է
օրիորդի ձեռքերն ու ոտները և սկսում է ծեծել
նրան: Գործը չուտով յայտնվում է, գնում են
դաշտը և գտնում են աղջկան կիսամեռ ընկած,
կապած ձեռքերով: Տղան փախել է Թիւրքիա,
իսկ գործը յանձնվել է քննիչին»:

Մեզ գրում են որ Իգիթիթի դպրոցը փակված
է հոգաբարձութեան թուլութեան պատճառով:
Երեք ամիս է որ ուսուցիչների ուսուցիչները վը-
ճարված չեն: Ուսուցիչները ստիպվեցան դա-
տաստանի դիմել, իսկ հոգաբարձութեանը բողո-
ւորվին անտարբեր է մնում: Թղթակիցը հրաւի-
րում է այդ անցքի վրա թեմական տեսչի ու-
շադրութիւնը:

ՎԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեզ գրում են որ այդտեղի
միջի ծառերը այս տարի բոլորն էլ որդնակեր
եղան, քացի կեռածներով: Ամեն մի տների վրա
անհաշիւ որդուքներ կան բուն դրած:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՃԵՐԻՏԷ ՀԱՒԱԳԻՍ» ԼՐԱԳՐԻ ԶՅՈՒՄԱԾ

Ճէրիտէ «Սամանեան Աթա» վերնագրով
երկար յօդուած մը կը հրատարակէ այս ա-

ռաւօտ, յորում Օսմ. Ասիոյ տէրութեան
միւս մասերէն աւելի կարեւորութիւն ունե-
նալը յայտնելով կըսէ թէ Ռուսիա Պարս-
կաստանի հետ համաձայնութեամբ մեզ
կրնայ ֆեոսել, բայց մեզի համար աւելի
փառնաւորը Ռուսիոյ Հայերը Պոլսոյ Հա-
յոց հետ քաղաքականապէս միացնելն է,
Ռուսիա մտադիր է ճաշկաստանի Հայերը
շահելով, Պուլղարիոյ խաղը Հայաստանի
մէջ ալ խաղալ, որով Ասիոյ կողմէն նորանոր
զգուարութիւններ պիտի ծագին մեր առ-
ջէ:

Ճէրիտէ հետեւալ կերպով կը շարունա-
կէ:

«Պոլսոյ հայկական մամուլը այս նպատա-
կին գործիք ընելու ջանք մը կայ, և անցեալ
օր մեր գրած «Ուսուցիչները» ստոր տպագրոյց
է: Տիֆլիս այժմ քովիթէնիւր կազմութեան
կեդրոն եղած է, ուր Ռուսիոյ Հայոց բարե-
կեցութեան և Բիւրտերու հարստահարու-
թեանց վրայ կը խօսուի շարունակ. և եթէ
իրաց այս վիճակը նկատողութեան չառ-
նուի, մեծ խնդիր մը կրնայ ծագիլ. փասն
զի չենք կրնար ըսիլ թէ Հայոց մէջ
զանգ օգնէ երբեք նման անձինք
ան պակաս են, որք 35 տարի դադ-
տնի գործելով, զմեզ յանկար-
ծակիլ բերին»:

«Թէեւ չենք յուսար որ հաւատարիմ
Հայք Ռուսիոյ ուղեկաններուն մէջ ինան,
սակոյն Ռուսոյ և Պարսից բերանները
Բիւրտերու երեսէն եղած հարստահարու-
թիւններն յեղեղելով միշտ, բնական է որ
խնդիր մը ծագի: Երբ գանդաւանները շատ-
նան, հաւանական է որ պ. կրտսեմն ալ

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Ղ
(1722—1728)

Մէլիք-Փարսադանի ձեռնարկութիւնը իսկա-
պէս չէր հակառակում Բայինդուր իշխանի դի-
տաւորութեանը, այլ աւելի նպաստում էր նրան:
Իրաւ է, որ հայերը զինված էին լաւ հրացան-
ներով, որ սպանանցի վաճառականների միջնոր-
դութեամբ, Ռուսաստանի և Կասպից ծովի վրա-
յով, ստացվել էին Եւրոպայից: Հայ զինուորը ա-
ռաջին անգամ տեսնում էր իր հրացանի ծայրին
սուլին և այդ այնքան զուարճացում էր նրան,
որքան մի նոր խաղաղիք երեխայի ձեռքում:
Որի ընդհակառակն, թշնամու հրացանները
բոլորովին չին ձեռք էին և ստատիկ ծանր: Նրանք
սուլինների փոխարէն ունէին իրանց ծայրին երկ-
նգի եղջիւրներ, որ չինված էին փայտից և ծա-
ռապում էին որպէս նեցուկ: Եղջիւրները այնպէս
էին յարմարեցրած, որ հեշտութեամբ շարժվում
էին. արձակելու ժամանակ կարելի էր նրանց
սուր ծայրերը ամրացնել գետնի մէջ, որպէս եր-
կու ոտիկներ, և հրացանի փողը հորիզոնական
ձեռով կանգնեցնել նրանց վրա: Այդ այն յար-
մարութիւնն ունէր, որ ծանր հրացանը զող-
ղուն ձեռքի մէջ բնաւ չէր շարժվիլ իսկ երբ
պէտք չէր գործ ածել: Կարելի էր եղջիւրները
հրացանի փողի ուղղութեամբ շուտ առաւ այդ
ղուղիեան մէջ նրանք սուլինի ձև էին ստանում,
միայն փայտից չինված: *)

*) Այդ տեսակ եղջիւրաւոր հրացաններ այդ

Անձրեւ մանրիկ կաթիլներով դեռ մաղվում
էր: Բարեբախտաբար ցեխ չէր գոյացնում. առա-
ջոտ հողը ծծում էր իր մէջ վերելից թափված
խոնավութիւնը: Բացի դրանից, լեռների տափա-
րակները պատած էին կամ խիտ խոտաբույսերով,
կամ սալաքած ապառաժներով, որոնց վրայից
վազում էր ջուրը:

Այդ բոլոր հանգամանքները լցնում էին մէլիք-
Փարսադանի սիրտը անսահման ուրախութեամբ:
Ներուճի զօրապետը, կարծես, կրկին մանկացել,
երիտասարդական աշխոյժ և եռանդ էր ստացել:
Խորտակված, միմեանց վրա դիզված ժայռերը,
պատի նման ուղղաձիգ սպառաժները, լեռների
զգուարեղանիկ դարիզուտը, և տեղ-տեղ խորին
խրամատները ամենին չէին վճատեցնում նրան:
Իր զօրքերի առաջն անցած, խրախուսում էր նը-
րանց, սիրտ էր տալիս, և յորդորում էր առաջ
մղվել:

— Դէ, զաւակներս, այդ սարն էլ անցնենք,
թշնամին մեր ճանկերի մէջ կը լինի:

Իսկ նրա զաւակները առիւծի նման առաջ
էին գնում, և բնաւ պէտք չունէին հրամանատա-
րի բաջալերութեանը:

Երբ բաւական տարածութիւն անցան, ծերունի
զօրապետը հրամայեց զինուորներին, որ փոքր
ինչ ճանգրիտ առնեն, կազդուրվեն, վերջնական
յարձակումը գործելու համար: Նրանք անկանոն
կերպով նստատեղին քարերի վրա: Ոմանք սկսե-
ցին ծխել, ոմանք իրանց պարկերի միջից զուր
բերելով արագի փոքրիկ սրուակները, խմում էին
և իրանց ընկերներին «համեցէք» էին անում:
Նրանց զուարթ երեսները, շառաղուշած, փթթած
լեռնային օդից ու եղանակի զովութիւնից, ար-

կողմերում այժմ գործ են ածում որսորդները,
երբ պէտք էր խոշոր կենդանիներ սպանել:

տալայտում էին խորին բաւականութիւն: Կար-
ծես, խնձորի մէջ էին նստած, կամ հարսանիքի
հանդէս էին կատարում:

Ձինուորները մի առանձին համադրեալ չու-
նէին, այլ կրում էին իրանց տեղային հագուս-
տը, որ պտորաստված էր հայ կնոջ ձեռքով
մանված բուրժից, նրա ձեռքով գործված շալից,
և նրա մասներով կարված «գէլմայից»: Այդ
փոքր ինչ կոշտ գործուածները այն առաւելու-
թիւնն ունէին, որ անձրեւի տակ թրջվելով, աւե-
լի պնդանում էին և բոլորովին անթափանցիկ
էին դառնում: Այդ պատճառով, նրանք խիտ
անհոգ կերպով նստած էին անձրեւի տարափի
ներքոյ, միայն իրանց զէնքերը ծածկելով վերաբ-
կունների տակ:

Մինչ զինուորները նստած հանգստանում էին,
ծերունի զօրապետը ոտքի վրա անհանգիստ կեր-
պով աչս կողմ և այն կողմ էր գնում: Երբեմն
կանգնում էր նա և ահանջ էր գնում: Մթնին
թուղպերի թանձրութիւնից, մի յիսուն քայլ հե-
ռաւորութեան վրա, ոչինչ չէր կարելի տեսնել:
Այլ փոխարէն ծառայում էր ականջը: Ծերունի
զօրապետի լսողութիւնը, չը նայելով նրա հա-
սակին, զեռ չէր կորցրած իր վաղեմի սրութիւ-
նը: Նա հետազօտում էր ամեն մի աննշան շը-
շուճ, քննում էր ամեն մի անորոշ հնչիւն և
ձայնահմայի: *) Նման նրանցից գուշակութիւններ
էր անում: Նա կանչեց իր մօտ Աթանդիլ գնդա-
պետին, ասելով.

— Նկատում եմ, թշնամու հրացանների ծայրը
հիմայ սկսեց նուազիլ, երեսմ է. անձրեւ թոյլ
չէ տալիս նրանց շուտ-շուտ կրակ տալ:

*) Չայնահմայ նշ. ձայներից գուշակութիւններ
անող, որպէս էին Արմաւիրի սօսիաց անտառե-
րումները:

— Ես էլ այդպէս եմ կարծում, պատասխանեց
գնդապետը, ինքն էլ նոյնպէս ահանջ գնելով:

— Նկատում եմ, դարձեալ հարցրեց ծերունի
զօրապետը. — հրացանների ծայրը աւելի մօտից է
լավում, երեսմ է, թշնամին մեղանից շատ հեռու
չէ գտնվում:

— Նրանք այդ բոլորի ետեւում են, խոսակ-
ցութեան մէջ մտաւ կաղ Օհանէսը, յանկարծ
յայտնվելով, կարծես, գետնից բուսաւ նա:

— Ի՞նչ գիտես, հարցրեց ծերունի զօրապետը
հետաքրքրութեամբ:

— Մի ժամ առաջ ես նրանց բանակի մօտից
անցայ, այնքան մօտից, որ կարողացայ բոլորը
տեսնել: Եւ նա սկսեց պատմել իր տեսածները,
որից երևաց, թէ թշնամին բաւական բազմաթիւ
է, թէ նրանց հրացանները, թէեւ բանի պէտք
չեն, բայց ամենքն ունեն սրեր, որ ձեռնամարտ
կռիւի ժամանակ կարող են գործ ածել: Մի քա-
նի ուրիշ մանրամասնութիւններ ես հաղորդելուց
յետոյ, աւելայրեց նա:

— Երեսմ է, Բայինդուր իշխանը բաւական
հեռու է գնացել, և գուցէ անցել է կիրճի միւս
կողմը: Թշնամին, որպէս ես նկատեցի, հոտը ա-
ռել է. պատրաստվում էին շարժվել զէպի այն
կողմը:

— Բայինդուրից շատ խելք չեն տեսնի, ասաց
ծերունի զօրապետը ծայրաւով, և դարձաւ զէպի
Աթանդիլ գնդապետը:

— Մերոնք բաւական կազդուրվեցան, հիմայ
պէտք է վրա տալ. սկզբում հրացանի բռնել,
յետոյ սկսել ծակծակել...

Աթանդիլ գնդապետը Դաւիթ բէկի հետ վը-
րաստանից եկած քաջերից մէկն էր, մօտ քա-
ռասուն տարեկան մի քղամարդ, որ յայտնի
էր իր յանդուգն և անվեհեր անձնավաստա-
թեամբ:

